

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվա՝ 5 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրեցիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусаба“

ՄԱՍԿ

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(անի կիրակի և առն օրերից):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Ներքին տեսչութիւն: Թիֆլիսի վաճառականները Ներքին լուրերը — Արտաքին տեսչութիւն: Զուգեցիկ: Նամակ Ֆրանսիայից: — «Մշակ» հեռագիրներ: — Յայտարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Առհասարակ մեր հարուստ վաճառականներին մեծ մասը ազգային ցանկեր դարձնելու և ազգի վշտերին կարեկցելու ակործակ ջունքին: Նրանք շատ սառն աչքով են մտիկ տալիս ամենայն բարեբաղնական ձեռնարկութիւններին: Վաճառականների այսպիսի վարմունքը շատ է հետաքրքրում ինչպէս մեր աղքատ ու անգոր ազգաւններին, նոյնպէս և մեր գլուխը լիքը և ջերմ գաղափարներով շատ անգամ հարցեր են առաջարկում: Բնական համար, հարցնում է մէկը, մեր այս պարսնները հարստութիւն են դիզում, եթէ նրան օրինաւոր կերպով գործածելը չը գիտենան: Ինչո՞ւ այս ինչ միլիոններ, հարցնում է երկրորդը, իր առատ աշխատանքից չէ ակործակում, իր համար աննշան համարված, մի բաժին հանել իր ազգակից խեղճերի համար: Իսկ ի՞նչ կը պակսի այս ինչ պարսնի քսակից, հարցնում է զարմացմամբ երրորդը, եթէ նա քարեկրաքար յանձն առնէր այս ինչ որբին իր հաշուով ուսում տալու և նրան մի ապահով վիճակի հասցնէր: Այս հարցերը ասացինք յաճախ կրկնվում են, բայց մի և նոյն ժամանակ դրանց պատասխանները շատ պարզ են: Վաճառականների գործերի հետ ծանօթ անձը տեսնում է որ նրանք բնաւ իրանց սիրելի չը գիտեն, ուրեմն ի՞նչպէս կարող են սիրել ուրիշին: Այո՛ կան մարդիկ, որ իրանց անձը ուրանում են միայն ընկերը սիրելու համար, և այս անկեղծ անձնուրացութիւն է, իսկ մեր պարսն վաճառականները իրանց անձը ուրանում են ոչ թէ ընկեր, այլ փող սիրելու համար: Այն մարդը, որ ոչինչ վիշտ չէ զգում իր չարչարանքից, իր գիշեր ու ցերեկ տքնելուց և տառապելուց, ինչպէս կարող է վշտանալ իրանից հեռու մի ազգակցի չարչարանաց վրա: Ինչո՞ւ համար է չարչարվում վաճառականը, գտցէ կը հարցնեն մեզ: Որովհետեւ նա ցանկանում է մի տարվան մէջ ստանալը օգուտը մի օրվան մէջ ձեռք բերել, և որովհետեւ խաղաղութեամբ աշխատելով այս փափագանաց հասնել անհնարին է, ուստի ցանկանում են իրան մարմին, ընտանեաց և կամ ծառայողների տանջանքի մէջ որոնել այդ օգուտը: Եթէ ընթերցողներդ միշտ ցանկանար հանդիսատես լինել վաճառականների տարօրինակ ձգնութիւններին, ես նրան կողարկէի քարվանսարէն, ուր գտնվում են մի քանի կիսամիլիոնների ձգնարանները: Այստեղ տիրում է մի տեսակ խուլ լուծութիւն: Վաճառականների գրասենականներում, որտեղ մենք ձգնարաններ ենք անուանում, լսվում է

միայն յուսալիւր և միանգամայն սպառնացող սլոտի ձայնը, սրը մերթ ընդ մերթ ընդհատում են Մաշադի-Քեայլուաների և հաստաղլուս մուշտարիների ձայները: Այստեղ սեղանաւորների մօտ, Քրիստոսի տաճարից վաճառականների պէս, նստած են մեր խաղէկները, ասիւնացիների անքուն պահպանները: Ամենայն տեղ տիրում է սարսափելի ցուրտ և սառնոյց: Խեղճ ջրկիրը իր սառած ձեռքերը բերանի շնչով է տաքացնում, նոյնը անում է և սայլապանը և անխաղճը, բայց զարմանալին այն է որ մի և նոյն մեքենայով է տաքանում և մեր միլիոններ վաճառականը և Ֆրանսիայի, Անգլիայի և Աւստրիայի հետ հաղորդակցութիւն ունեցող խաղէկները: Յիշեալ քարվանսարայում զբոսնում են այս տեսակ մի քանի հարուստ վաճառականներ, միմեանցներ և զրասենականներ, բայց ոչ մէկի մէջ չը կայ մի փոքր կրտսի նշոյլ, որով կարողանան թէ իրանք և թէ իրանց ծառայողները իրանց կապտած ձեռքերն ու սառած ոտքերը տաքացնելու, Այս միջանի օրերի արտաքին կարգի ցուրտ տեղոյն գործակատարներին ստիպեց տաքանալու: Համար գտնաւոր գիտեր հնալից այս ինքն ինչ խեղճերը տեսնելով որ իրանց աղաները վարձատրութիւն ստանալու յուսով չէին զգում ցրտութեան սաստիկութիւնը իրանք մտածելին այդ բանի ծարր գտնելու: Այնուհետեւ քարվանսարան մի հանդիսարան դարձած էր: Մէկը այս անկիւնում կազմել է խաղում, բնական ջերմութիւնը աւելացնելու յուսով: Երկրորդը կապտած ձեռներով մարմնադրութեան մեթոդ է կատարելագործում, երրորդը եսպօնական խաղարկութիւններ է անում և միւսները սատանան գիտէ թէ ինչքան են անում էլ իրանց ամենի մէջ աւելի բաղդաւոր է վահլաբաշի Փաթաւը: Նա կրակ ունի, և այդ կենդանաւոր տարրի մօտ ազատ նստած իր գեօզակ երգն է երգում: Նա իր օրական ստացած վաթսուն կոպէկով աւելի երջանիկ է քան թէ մեր Ֆրանսիականները, որոնք չը նայելով առաջները դարձած փողերին, գողում են ցրտի սաստկութիւնից: Ի՞նչ է սրանց այս ձգնութեանց պատճառը — ոչինչ բանաւոր պատճառ չը կայ, և չէ կարող լինել: Միայն թէ փայտը թանգ է:

Այս և նրանց նման ձգնութիւններ շատ ունեն մեր հարուստ վաճառականները, բայց ամենը հրապարակ հանելու ժամանակ չը կայ: այս միակ հանգամանքը յիշելնրուս պատճառը այն էր, որ մեր յիշեալ ազգաւններն ու ուսումնականները փոքր ի շատէ ծանօթանալով մեր վաճառականների ներքին վիճակին, շատ չը զարմանան նոցա այն տարօրինակ սառնասրտութեան վրա, որ նրանք գործական ձեռնարկութիւններ, որոնց նրանք իրանց պտուղը պիտի տան առանց փոխարէն մի ընդունելու: Իսկ վաճառականի համար տալ և փոխարէնը չընդունել, մի և նոյն է թէ Գարբիէլ հրէշտակի հետ ապստիկ առևտուր անել, և ուստի աւելի խոհեմութիւն է որ մեր ազգաւնները շատ չը նեղացնեն վաճառականների պատկառելի դասը: ազգի կարիքը լուրջանելու համար թող դիմեն ուրիշ աղբիւրների, թող ուրիշ հնար որոնեն:

Թէ չէ իր սեփական տուրքով ազգի վերջեր դարմանելը դեռ վաղ է մեր վաճառականի համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզանից անկախ պատճառներով «Մշակ» ներկայ համարը հրատարակում ենք միայն կէս թերթի մեծութեամբ:

Մեզ հաղորդում են ԲԱԹՈՒՄԻՅ, որ այնտեղի փոստատանը մեծ անկարգութիւն է տիրում: Նամակադրի մի ծրարը երկու ամիս մնացել է փոստատանը:

Երեք պրեմիաներից մէկը 200 ռուբլ կը խաղացվի յուլիսի վերջին օրերում: Պրեմիան կարող են ստանալ նրանք, որոնք զրկել են ամբողջ տարով և ապահովագիր ունեն, նոյնպէս նրանք որոնք զրկել են կէս տարով և մինչև յուլիսի 20 կը վերանորոգեն բաժանորդութիւնը: Երկրորդ և երեք դաւանների մեր այն բաժանորդներից, որոնք չեն ուղարկել 8 կոպէկանոց փոստային մարկա ապահովագիր ստանալու համար, մինչև յուլիս ուղարկել: Այն բաժանորդները, որոնք ամբողջ տարով զրկել են և բաժանորդագին մասը միայն տուել են, պէտք է լրացնեն բաժանորդագիրը: Հակառակ դէպքում պրեմիա չեն կարող ստանալ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԱԽՅԵՐԻԱ

Զվիցերիան այս օրերս կոցրեց իր պետական ամենահաշակաւոր մարտիկանցից մէկին պ. Կուբսին, որ այս վերջին երեսուն տարվայ ամենանշանաւոր և ամենաեռանդուն գործողներից մէկն էր: Նա նշանաւոր էր իբրեւ ամենաերկեր օրէնսգէտ: Նրա նուրբ հանձնարը, վստմ ճարտարախօսութիւնը, համոզել ընդունակութիւնը, անխնայ աշխատասիրութիւնը և այն հմտութիւնը որ նա ունէր զրկելու ուսման բոլոր ճիւղերի մէջ, ամենքին ապշեցնում էին: Նրա մասին «Bund» ասում է, որ նա զվիցերական առաջադիմական կարծիքի հետ միշտ համաձայն չէր: Նրա բնաւորութիւնը փոքր ինչ վիպասական (romanesque) էր, և հէնց այդ պատճառով էր, նա այնպիսի ճանապարհներով հասաւ իր փառքի մեծութեանը, որով չը կարողացան հետեւել նրա պաշտօնակից ընկերները: Բոլոր իր կենսիքի ընթացքում թէ կանոնօրէն երում և թէ Ֆէյէրապան ժողովներում, նա միշտ մնաց ազնիւ քաղաքացի և ջերմ ազգասէր: Նա վիհանն էր, և ոչ մի հեղինակութեան առաջ չէր զոհում իր անձնական համոզմունքները:

Նա ծնվեցաւ 1822 թւին Յիւրիխի կանտոնում Աֆօլտերն կոչված աւանում: Նրա հայրը մի համեստ կարողութեան տէր գիւղացի էր: Նա իր սկզբնական ուսումը ստացաւ իրանց կանտոնի ուսումնարանում, յետոյ նա շարունակեց իր ուսումը Բէրնի, Հայդելբերգի և Յիւրիխի համալսարաններ իր աւարտական մասնաւորում: Ուսումը աւարտելուց յետոյ, նա սկզբում մի

քանի աննշան պաշտօններ վարեց, յետոյ 1847 թւին նա մեծ խորհրդարանում պատգամաւոր ընտրվեց, ուր խորհրդարանը ներսն մի քանի անգամ նախագահութեան հրաւիրեց: Դօկտոր Էշերի հրաժարականից յետոյ նա կանտոնական կառավարիչ նշանակվեցաւ, ուր նա կատարեալպէս ցոյց տուեց իր մեծ գործունէութիւնը և հանձնարը: Կեռ 1854-ին էր, որ նա առաջարկեց մահաւան պատիժը ոչնչացնել, որը միայն 1868-ին քուէարկվեցաւ: Բացի այս նա ժողովրդական լուսաւորութեան համար մի օրէնք առաջարկեց, որը առանց որ և է փոփոխութեան ընդունվեցաւ, և որը գերեցիկ արգասիքներ ցոյց տուեց:

Կուբս քաղաքական ասպարէզ մտաւ 1849 թւին: այս ժամանակ նա ազգային խորհրդարանի անդամ ընտրվեց, յետոյ 1851 թւին նա այս մի և նոյն խորհրդարանի նախագահ ընտրվեցաւ, որից յետոյ նա արդէն անցաւ պետական խորհրդարան, ուր 1861 թւին նոյնպէս նա նախագահ ընտրվեցաւ: Դօկտոր Յիւրիխի մահից յետոյ պ. Կուբս յաջորդում է նրան իբրեւ Ֆէդերական խորհրդարանի անդամ, և նա 1861 թւից սկսած արդէն հանդիսանում է իբրեւ նախագահ մի և նոյն խորհրդարանի, նա այս պաշտօնը վարում էր նոյնպէս—68 և—70 թւերում: 1872 թւին էր կամենում էին քննութեան ենթարկել սահմանադրական օրէնքները, պ. Կուբս առաջնորդ հանդիսացաւ ժողովրդական կարծիքի յուզմունքներին, որոնք կամեւ նուր էին հաստատ պահպանել սահմանադրական օրէնքները, բայց տեսնելով, որ բոլոր ջանքերը զուր են անցնում, նա հրաժարական տուեց, և այս անգամ արդէն, նա ընդ միշտ հեռացաւ քաղաքական ասպարէզից:

Նրա նա մասնաւոր կենսիքի մէջ մտաւ, նա կամեցաւ մի երկաթուղու ընկերութեան գլխաւոր լինել: Այդ ժամանակ պ. Ալֆրէդ Էշերը գլխաւոր էր «Nord-Est» երկաթուղուն, որը կապում է Յիւրիխը մերձակայ կանտոնների գլխաւոր կէտերի հետ: Պ. Էշերի հակառակորդը, պ. Զուլցերը ստեղծել էր նա ցի օնալ բահն, որ պէտք է միջեր առաջնի հետ, երկրորդական տեղերը կապելով դարձաւ Յիւրիխի հետ, բայց այս վերջինը իր ձեռնարկութիւնների մէջ մեծ մեծ սխալներ գործեց: Պ. Կուբսն էլ սրանց հետեւելով կամեցաւ նոր մի ընկերութիւն հիմնել, բայց որպէս զե իր գործունէութիւնը ուրիշների նման չը լինի, նա մտածեց միայն մի գծով մի նեղ ճանապարհ չինել, որ պէտք է ոչ թէ միայն Յիւրիխի հարեան կանտոնները միմեանց հետ կապել, այլ և նա պէտք է կապել բոլոր զվիցերիայի մասերը:

Բաղդաւորապէս այդ ձեռնարկութիւնը հէնց սկզբներում ցոյց տուեց իր անկարելիութիւնը, որովհետեւ դա թերեւս բոլորովին մերկ կը թողնէր այդ գործունէայ անձին: 1872-ի սահմանադրական օրէնքների վերաքննութեան ժամանակ եղած ծայրահեղ պօլէմիկ անիւր մի մեծ անդունդ էին փորել նրա և նրա քաղաքական հին բարեկամների մէջ: Նրա սահմանադրական օրէնքները վերաքննեցին, և դրա համար մի ժողով կազմվեցաւ, որին մշտական վերաքննու-

Թեան իշխանութիւն տրվեցաւ, այդ ժա-
մանակ պ. Յակոբ Գուրախի գաղափարներն
թարկեցին, ուր ստիպւած էր պատասխա-
նել և բացատրել իր մտքերը, բայց դրանից
փոքր ինչ ժամանակ յետոյ երբ նախագահ
պ. Բուռլերը վախճանվեցաւ, և երբ կրքերն
ու ռիսակալութիւնները փոքր ինչ հանգստա-
ցան, փոխանակ նրան դատաւար, վճռեցին պ.
Բուռլերի փոխանակ նրան նախագահ ընտ-
րել, և հենց առաջին անգամ նրան ժողո-
վն էին հրաւիրել, երբ նա պառկեցաւ նոյն
հիւանդութեան, որ նրան գերեզման իջեց-
րեց:

Ֆեդերական խորհրդարանը իր կողմից ու-
ղարկեց պ. պ. Համբարձում և Շենկին, որպէս
զի խորհրդարանի կողմից նրանք ներկայ լի-
նեն նրա յուզողականութեան հանդիսին:

Պ. Գուրախի մահը, առանց կարծիքների
խտրութեան, բոլոր Զվիցերլանդի համար մեծ
սուգ է:

ՆԱՄԱԿ ՖԻՆԱՆՍԻՍՏԻՑ

Փարիզ, 31 յունվարի

Երեկ երեկոյան վերստին լուր հասաւ ֆա-
րիզ ֆրանսիական հասարակականութեան նա-
խագահ մարշալ Մակ-Մանտի պաշտօնազուրկ
լինելու մասին: Ազգային ժողովը ընտրեց հենց
յս յոյն օրը նախագահ հասարակականութեան
Ժիւլ Գրիլի, մինչ այժմ նախագահ գեղարուստ-
ների: Այս հանգամանքը այնքան նշանակաւ, որ
որ ես չեմ կարող ինչ զսպել այդ անցքի մեկ-
նութիւնը չուղարկել «Մշակ» ընթերցողներին:

Ինչպէս յայտնի է, 1877 թ. Մակ-Մանտի
առանց որ և իցէ էական պատճառի, արձակեց
Ժիւլ Միտիլի միջնորդութիւնը և իբրեւ հակա-
սահմանադրական գաղափարներով, արձակեց
նաև գեղարուստների ժողովը նոյն տարվայ
մայիս ամսին: Թէ ինչ դժբաղդութեան մէջ էր
Ֆրանսիան նոյն տարվայ հինգ-եօթե ամիսներում,
այդ զուցէ դեռ ամենի յիշողութեան մէջ լինի,
այդ յանդուգն գործի սկզբնական փուլը էր ծե-
րակցանքի ժողովը, սենատը, առանց որի հա-
ւանութեան գեղարուստների ժողովը արձակել
չէր կարելի: Ինչո՞ւ սենատը իր հաւանութիւնը
տուեց. որովհետեւ նա, որի մեծամասնութիւնը
միապետական տարրից էր, կարծում էր Մակ-
Մանտի օժանդակութեամբ կարող էր գեղարու-
ստների ժողովը ուղարկել միապետական ներ-
կայացուցիչներ, իսկ եթէ այդպէս լինէր, այն ժա-
մանակ միաձայնութեամբ նախագահի և երկու
ժողովների հասարակականութիւնը վայր ձգել և
թագաւոր կամ կայսր դա՛ն նստացնել. մի խոս-
քով հասնել նորան, ինչ որ այստեղ ասում են—
coup d'état—տէրունական հարուած:

Սենատի սխաղագործութիւնները ոչնչի չը հա-
սան, որովհետեւ ազգը ուղարկեց պարլամենտը
հասարակականության ներկայացուցիչներ մեծա-
մասնութեամբ, այնպէս որ Մակ-Մանտի այն-
պէս գրութեան մէջ ընկաւ, որ կամ պիտի իր
պաշտօնից հեռանար ու կամ կրկին ընտրէր հա-
սարակականութեան միջնորդութիւնը: Երկար տա-
տանվելուց յետ, նա վերջապէս լսեց ազգի
ձայնին և 1877 թ. 14 դեկտեմբերի բռնապար-
տիւս Բոյոյի և Ֆլուրուի տեղ միջնորդութեան
գլխաւոր դառաւ Գրիլի, որը հասարակակա-
նական է, որպէս և իր միւս բոլոր միջնորդ-
ները:

Երկրի մէջ կրկին սկսեց խաղաղութիւնը ախ-
րել. տարին վերջացաւ և ահա գալիս է 1878
թիւը իր չքեղ և փայլուն համաշխարհային հան-
գետի Տարին անցնում է ամենապատուական
կերպով: 1879 թիւը սկսում է Սահմանադրու-
թիւնը պահանջում է, որ սենատի երրորդ մա-
սը պիտի իւրաքանչիւր երեք տարի մի անգամ
նոր ընտրվեն:

Այս տարվայ յունվարի հնգին երեք տարին
լրանում էր, ուստի նոր ընտրողութիւններ պիտի
լինէին: Այդ օրը մի շատ նշանակաւ օր էր, որով-
հետեւ սենատի մեծամասնութիւնը մինչ այն օրը
կազմում էր հասարակականութեան թշնամի
միապետականներ, որոնցից շատ վատութիւն-
ներ կարելի էր սպասել: Ընտրողութիւնները լի-
նում են և ահա սենատն էլ գեղարուստների ժո-
ղովի նման դառնում է հասարակականական:

Յունվարի հնգի անցքից յետ հարկաւոր էր
խմանակ, թէ արդեօք միջնորդութիւնը պիտի

փոխել, թէ ոչ: Պատճառ: Ահա ինչ է պատճա-
ռը: Երբ 1877 թ. ընտրվեց միջնորդութիւնը,
որի անդամները բոլորը միապետականներ էին,
նոքա սկսեցին հասարակականութեաններին թէ
դատաստանական և թէ զօրքի պաշտօններից
զրկել և նոյա տեղ միապետականներ դնել:
Գրիլի, այժմեան միջնորդը, չը կարողացաւ
մի տարվայ ընթացքում այդ միապետականնե-
րին կրկին պաշտօնից զրկել: Դատաստանական
զօրքերի մէջ, ոչ էլ պատերազմի միջնորդը զօր-
քի մէջ: Գրիլի, պատասխանեց յունվ. 20-ին
գեղարուստների ժողովի մէջ, որ եթէ այդ ան-
ձերը չէ փոխել, դորա համար նա ունէր ծան-
րակշիռ պատճառներ և թէ պարլամենտը կարող
է հաւատարմացած լինել, որ նա այդ փոփոխու-
թիւնները կանէ մօտիկ ապագայում: Պարլա-
մենտը ընդունեց միջնորդի խօսքերը և մեծա-
մասնութեամբ վճռեցին պահել այժմեան միջնո-
րութիւնը:

Ուրեմն միջնորդութիւնը մի բարոյական
պարտք է համարում իր համար որքան կարելի
է շուտով բաւականութիւն տալ ազգի պահանջ-
ներին: Ամսիս 27-ին միջնորդ Գրիլի, ներկա-
յացնում է մի գեղարուստ, որի զօրութեամբ դա-
տաստանական բարձր պաշտօնները պիտի
իրանց պաշտօնները թողնէին, որովհետեւ նոքա
անձամբ հասարակականութեան թշնամի են:
Մակ-Մանտի ցաւք արտ. ստորագրում է, Այդ
գեղարուստից յետ գալիս է մի ուրիշ գեղարուստ, որը
պահանջում է զօրքի մի քանի կորպուսների զօ-
րապետներ, որոնք բռնապարտիստներ են, փո-
խվեն: Այստեղ արդէն Մակ-Մանտի չէ կարո-
ղանում իր անբաւականութիւնը ծածկել և մեր-
ժում է ստորագրել: Այդպիսով ծագում է ան-
համաձայնութիւն, որի ելքը կարող էր լինել
1) կամ գեղարուստի յետ վերջները միջնորդու-
թեան կողմից, 2) կամ միջնորդութեան պաշ-
տօնից զրկվելը և 3) կամ վերջապէս Մակ-Մա-
նտի համաձայնութիւնը, իսկ թէ ոչ նախագա-
հութիւնից հեռանալը: Նա ընտրում է այս եր-
րորդը և այս վճիռը յայտնում է միջնորդներին:

Աւելորդ եմ համարում ձեզ նկարագրել բոլոր
միջնորդները, որքան և հեռաքրքրի լինեն նոքա,
բայց հարկաւոր կը համարեմ պատմել ձեզ երէ-
կվայ կէսօրից յետ անցած պատմութիւնը որը
վերջանում է ամենահրճաւայի և ազգօգուտ
ընտրողութեամբ:

Երէկ սենատի և գեղարուստների ժողովի նա-
խագահները ստանում են Մակ-Մանտից հեռե-
ւեալ նամակը:

«Նոյն իսկ այս չլջանի (պարլամենտի) բացվի-
լուց, միջնորդութիւնը ձեզ ներկայացրեց օրէնք-
ների մի պրօգրամ, որոնք, քաղով բաւականու-
թիւն հասարակաց կարծիքին, կարողանային գե-
ղարուստներ առանց վտանգի ապահովութեան և
երկրի լաւ վարչութեան համար: Չը նայած իմ
անձնական կարծիքին, ես սուր նորան իմ հա-
ւանութիւնը, որովհետեւ ես չէի զոհում ոչ մէկը
իմ պրինցիպներին, որոնք հաւատարմ մնալուն
թելադրում էր իմ խղճմանը: Այսօր միջնո-
րութիւնը, ցանկանալով պատասխանել երկու
ժողովների մեծամասնութեան կարծիքին, ինձ
առաջարկում է, ինչ կը վերաբերի դիւրութեան
մեծ զօրավարութիւններին (commencemens), ընդ-
հանուր միջոցներ, որոնք, իմ հայեացքով, զօրքի
ուրեմն և երկրի շահերին հակառակ են:

«Ես չեմ կարող նոյա ստորագրել: Տեսնելով
այս մերժումը, միջնորդութիւնը յետ է քաշ-
վում: Որ միջնորդութիւն էլ որ լինէր, եթէ նա
ընտրած լինէր ժողովների մեծամասնութեանից,
իսկ մի և նոյն պայմանները կառաւարկէր:

«Եւտ այնու եւ իմ ցանկալի կրճատել իմ պաշ-
տօնի տեղութիւնը, որը ինձ յանձնած էր ազ-
գային ժողովից:

«Ես տալիս եմ իմ հրաժարականը իբրև նախա-
գահ ֆրանսիական հասարակականութեան:

«Քողնելով պաշտօնը, ես ինձ միջնորդում եմ
մտածելով որ յիսուն ու երեք տարվայ միջո-
ցում, որ ես զոհել եմ ինձ իմ երկրի ծառայու-
թեան որպէս զինուոր և որպէս քաղաքացի, ես
չեմ առաջնորդվել ոչ այլ ուրիշ, եթէ ոչ պա-
տուի և պարտաւորութեան զգացմունքներով և
լիովին անձնագոհութեամբ դէպի հայրենիք:

«Ես հրաւիրում եմ ձեզ, պարոն նախագահ հա-
ղութիւն այս վճիռը ժողովին:

«Ընդունեցէ իմ վերին յարգանքների զգա-
մունքները»

Այս նամակը լաւ ազդեցութիւն է անում ժո-
ղովների վրա: Նիստը վերջանալուց յետ, երբ
գեղարուստները և ձերակոյտները գնում են
իրանց գրասենեակները (բիւրօ) գամբետան
մի ծառ է կարգում իւր խմբի մէջ, ուր նա ա-

ռաջարկում է Ժիւլ Գրիլիին ընտրել նախագահ
հասարակականութեան: Նոյն վճիռը ընդունում
են նաև ձերակոյտները իրանց բերօններում:

Համեմատ սահմանադրական կանոններին, եր-
կու ժողովները հաւաքվում են միասին և կազ-
մում են միասին ազգային ժողով, ուր վճռվում է
նախագահի ընտրողութիւնը: Ժողովին նախա-
գահում է սենատի նախագահ պ. Մարտէլ, որը
կրկին կարգում է Մակ-Մանտի նամակը: Մի-
երկու ժամ անցնում է և ժամի եօթին Մարտէլ
առաջարկում է ժողովին ընտրել նոր նախագահ:
713-ից 870 տալիս են իրանց ձայները: Պարոն
Ժիւլ Գրիլի ստանում 571 ընտրողութիւն, 90
ձայն ստանում է գեներալ Դանդի, որը բողոքել
է իւր կաղիքատուրի դէմ:

Մեծ ոգևորութիւն ժողովի մէջ. «Կեցցէ հա-
սարակականութիւն» կանչում են միասնապ քա-
լոր հասարակականութեանները շնչապառ:

Այդքան անցքեր, որոնք կարող էին սպառ-
նալիքներ լինել մի խաղաղ տէրութեան համար,
պատահում են մի երկու օրում, իսկ տէրութեան
գլխապետի փոփոխվելը անցնում է մի քանի
ժամում ամենախաղաղ, ամենահանգիստ կեր-
պով:

Որպիսութիւնը կարելի է կարգաւ ամենքի
երեսի վրա. որովհետեւ այն մարդը, որը տէրու-
թեան գլխին է կանգնած մի մարդ է, որից ար-
ժանաւորագոյնը չը կայ, որը իւր երկար կեան-
քում մարտնչել է հասարակականութեան համար
և որի վերին աստիճանի անապառնչութիւնը, ար-
դարապատութիւնը և իմաստութիւնը այժմ ոչ ոք
այլ ևս չէ հակառու:

Նա արժանի էր և արժանացաւ մեծ պատուի:
Ա. Ա.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԻՆՆԱ, 29 յունվարի (10 փետր-
վարի): Կ. Պօլսից հաղորդում են «Po-
lit. Corresp.» լրագրին ռուս—թիւրքաց
խաղաղութեան դաշնագրի հետեւալ գլխա-
ւոր վճիռները. բացի այն պատերազմական
վարձատրութիւնը, որ թիւրքերը պէտք է
տան ռուսներին, նշանակված է այլ ևս 26
և կէս միլիօն Ֆրանկ այն ռուսների համար,
որոնք բնակվում էին պատերազմից վնասված
երկրների մէջ: Ռուսներին յանձնված նա-
հանգների բնակիչները կարող են 3 տարվայ

ընթացքում ծախել իրանց հողերը և գաղ-
թիւր Բողը այն չարագործութիւնների հա-
մար, որոնք կատարվել են խաղաղական դաշ-
նագրի կապելուց առաջ, երկու կողմից էլ
կատարեալ աջողութիւն է շնորհվում: Ռու-
սաստանի նախկին առևտրական պայմանները
և դաշնադրութիւնները դարձեալ նորոգվում
են: Կաշնադրի վաւերացմամբ ռուսաց զօր-
քերը պէտք է սկսեն դուրս գալ և պէտք է
35 օրվայ մէջ բոլորովին մաքրեն երկիրը:
Ռուսների պահանջը 261/2 միլիօն մասին,
ռուսաց մասնաժողովները կը քննեն թիւր-
քաց պատգամաւորների հետ միասին: Ռու-
միլիային, Սերբիային և Չէրնօգորիային իրա-
ւունք է տրված համաձայնութիւն կապել Բ.
Կրան հետ պատերազմական վարձատրութեան
մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի: Պետական
բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ
95 ռ. 75 Կ., երկրորդ 94 ռ. 75 Կ., երրորդ
94 ռ. 87 Կ., չորրորդ 94 ռ. 87 Կ., ներքին
50% առաջին փոխառութեան տոմսակը արժէ
232 ռ. 50 Կ., երկրորդ 233 ռ. 25 Կ., ա-
րեւելեան առաջին 92 ռ. 50 Կ., երկրորդ 92
ռ., 85 Կ.: Լոնդոնի վրա ռուսաց 1 ռուբլ
արժէ 23 պէնս, Բերմանիայի վրա ռուսաց
100 ռուբլ արժէ 195 մարկ 50 պֆ., Փա-
րիզի վրա 242 Ֆրանկ: Տրամադրութիւնը
ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի: «Правит.
Вестн.» լրագիրը հաղորդում է. «Доложь» լրա-
գրի մէջ տպված հեռագիրը ծարիցիցից իբր-
թէ Ղեկնանկալում ցանկապատված և փակ-
ված աներում փոխում են գիտնելը պաշտօ-
նապէս հերքելով է: Կալիկները ուղւսներին
մէջ ամեն բան բարեկամող է: Հաստատութեան
ների մէջ հիւանդներ չը կան: Կոմս Լօրիս-Մէ-
լիքովից Մախովն ուղարկած հեռագիրներից
երեւում է, որ տարախոսիկ հիւանդութեան
բոլոր տեղերում գերեզմանատները մինչև
սաք եղանակի սկզբը գեղնափնկցիլային կե-
թարկվել և բոլոր գերեզմանները կը ծածկ-
վին Նէյալիքների սխաւեմայով:

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 թ. 14
ՊԸ ՀՐԱՏԱՐԱԿԱՒ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետե-
ւեալ օրերից:
Լրագրի դիւրը և պրօգրամման նոյն են մնում: Մինք ստանում
ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը
10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԱՅՆ
ԽՐԱԿԱՐԱՏԱՆ մէջ:
ԸՌԵՆՉԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կօպէկով հատը:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-
ЛИСЬ Редакция «Мшакъ»:
Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Особа, КОНЧИВШАЯ С. ПЕТЕР-
БУРГСКІЕ ПЕДАГОГИЧЕСКІЕ КУР-
СЫ (теоретическіе и практическіе), да-
етъ уроки по всѣмъ предметамъ гимна-
зическаго курса и по новѣйшимъ язы-
камъ. Готовить къ экзамену Домашней
Учительницы. Просятъ обращаться въ
контору газетнаго агентства Шавердова.

Մի օրիորդ, որ իմ ՌԻՍՏԻՐԸ ԱՒՐՏԵԼ
է ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄՇԱԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԳՊՐՈ.
ՅՈՒՄ (տեսական և գործնական), ընդունում է
իւր վրա գիմնազիական կուրսի դասեր ամեն
առարկաներից, նոյնպէս և նոր լեզուներից:
Պատրաստում է նոյնպէս քննութեան «սուլային»
վարձապետութեան պաշտօնին: Գիմել
հասկանալի լրագրական գործակալութեան
կանաթներն: